600.0004.30.01.02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունվարի 2002 թվականի №4
ք.Երևան

«Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը» հաստատելու մասին

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի բ) և 59-րդ հոդվածի 5-րդ կետերը, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը» (կցվում է):
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կանոնակարգման մասին» № 39 որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահ՝ ***Վ.Մովսեսյան***